ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հետադարձ փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան 17 հունիսի 2019 թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատո Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

11.06.2019թ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՄԷՄԱ» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Մասնակցից պահանջվել են ներկայացնելու առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

Հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը նույնպես ստացվել է հրավերով սահմանված ժամկետում:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց: Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ՄԷՄԱ» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:
2. Ընտրված մասնակից ճանաչել «ՄԷՄԱ» ՍՊ-ին՝ 1-2-րդ չափաբաժինների մասով:
3. Անգործության ժամկետն ավարտվելուց հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան